Արձանագրություն N 2

ՍՔՀՄ-ՊԸԱՇՁԲ-2016/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

07.07.2016թ, ժ 11:00, ք. Սևան, Նաիրյան, 164

ք. Սևան

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սահակյան – Սևանի փոխքաղաքապետ

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Ռաֆայելյան –Սևանի քաղաքապետի խորհրդական

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան – Սևանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 11.07.2016թ. գնման ընթացակարգի հայտարարությունը ինչպես նաև հրավերը տեղադրվել է www.gnumner.am կայքում:

1.2 Սևանի թիվ 3 "Հեքիաթ" մ/մ ՀՈԱԿ-ի շինության ներքին հարդարման աշխատանքների ձեռքբերման համար ՍՔՀՄ-ՊԸԱՇՁԲ-2016/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի համաձայն հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի	
	Անվանումը	Հասցեն
1	«ԳԻՊ ՇԻՆ» ՍՊԸ	ք. Սևան,Նաիրյան, 139/12
2	«ՍԱԲՐԻ» ՍՊԸ	Արարատի մարզ, գ. Այնթապ

1.3 Գնային առաջարկ պարունակող ծրարը բացվել է՝ ք. Սևան, Նաիրյան, 164 հասցեում:

1.4 Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների ծրարներները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Հայտ ներկայացրած մասնակիցները փակ ծրարներով ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու հրավերով պահանջվող փաստաթղթերը: Բնօրինակ փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

«ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթի բնօրինակում բացակայում է տուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 9/:

1.6 «ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել տուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 9/, իսկ հայտի փաթեթի մյուս փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

«ԳԻՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 9/ և կից վճարման հանձնարարականը լրացվել են թերություններով, իսկ հայտի փաթեթի մյուս փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

1.7 Մասնակիցների առաջարկած գները՝

(ՀՀ դրամ)

«ԳԻՊ ՇԻՆ» ՍՊԸ					
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը
1	Սևան քաղաքի թիվ 3 "Հեքիաթ" մ/մ ՀՈԱԿ-ի շինության ներքին հարդարման աշխատանքներ	2015000	201500	-	2216500

թվաբանական սխալներ չկան

(ՀՀ դրամ)

«ՍԱԲՐԻ» ՍՊԸ					
Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը
1	Սևան քաղաքի թիվ 3 "Հեքիաթ" մ/մ ՀՈԱԿ-ի շինության ներքին հարդարման աշխատանքներ	2200000	220000	-	2420000

թվաբանական սխալներ չկան

1. Հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 2-րդ ենթակետով, գնահատեց «ԳԻՊ ՇԻՆ» ՍՊԸ և «ՍԱԲՐԻ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերի՝ ծրարների կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացված ծրարներում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, և որոշեց՝

1.1. Մերժել «ԳԻՊ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ դրանում ներառված փուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 9/ և կից ներկայացվող վճարման հանձնարարականը հրավերով սահմանված վավերապայմաններին անհամապատասխան կազմված լինելու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

1.2. Մերժել «ՍԱԲՐԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը դրանում ներառված բնօրինակ փաստաթղթերում փուժանքի մասին համաձայնագիրը /Հավելված 9/ չներկայացնելու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

1.3. ՍՔՀՄ-ՊԸԱՇՁԲ-2016/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգը հայտարարել չկայացած բոլոր հայտերի հրավերի պայմաններին անհամապատասխանության պատճառով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 1) ենթակետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ.Սահակյան

անդամներ՝ _____ Ռ. Ռաֆայելյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան